

Կանանց ձեռնբերելությունը Հայաստանում



Այսօր Հայաստանում 18 հազար կին զբաղվում է գործարարությամբ: Եվ դա վերջին երեք տարիների ձեռքբերումն է: Հայաստանի գործատուների հանրապետական միության տվյալներով՝ 2009-ին գործարար կանանց թիվը 20 անգամ ավելի քիչ էր: Թեև դինամիկան ակնհայտ դրական է, սակայն բիզնեսով զբաղվող կանանց թիվը դեռևս շատ փոքր է Հայաստանում առկա 123.750 տնտեսավարողների համեմատ: Կանանց մեծ մասը զբաղված է կենսական միմիումն ապահովող գործունեությամբ՝ առևտրով և մանրածախ ծառայություններով: Միկրոբիզնեսում կանանց մասնաբաժինը հասնում է 20-25%-ի, միջին և փոքր բիզնեսում չի գերազանցում 10%-ը, իսկ խոշոր բիզնեսում կանայք գրեթե չկան: Թեպետ պաշտոնական տվյալներով՝ կանայք հանդիսանում են մասնավոր ձեռնարկությունների գրանցված սեփականատերերի 32%-ը, սակայն սա իրական պատկերը չէ, քանի որ հաճախ տղամարդիկ, հանդիսանալով իրենց բիզնեսի սեփականատեր և կառավարիչ, ինչ-ինչ պատճառներով գրանցում են այն կնոջ կամ այլ հարազատների անուններով: Լիակատար և հավաստի վիճակագրական տվյալների բացակայությունը խոչընդոտում է կանանց ձեռնարկատիրության նպատակային աջակցությունը:

«Ասիական զարգացման բանկը» աջակցում է կանանց



2013 թ. մարտից «Ասիական զարգացման բանկը» աջակցությամբ Հայաստանում մեկնարկել է «Կանանց ձեռնբերելության զարգացում» քառամյա ծրագիրը, որն իրականացնում է գերմանական «Փեն-քնսայթ» ընկերությունը՝ Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի (Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ) հետ սերտ գործակցությամբ: Կենտրոնի ուսուցողական ծրագրերին մասնակցելով՝ կին ձեռնբերելները սովորում են բիզնես ծրագիր կազմել, ավելի արդյունավետ բիզնես վարել: Լավագույն ծրագրերը ֆինանսավորվում են Հայաստանում առկա ամենամրցակցային պայմաններով՝ տարեկան 10% տոկոսադրույքով, մինչև 5 տարի մարման ժամկետով, մինչև 5 մլն դրամ առանց գրավի: Նշենք, որ ծրագրի շրջանակներում կատարվել է կանանց ձեռնարկատիրության ոլորտում կարիքների գնահատում, և Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի հետ համատեղ մշակվել է Հայաստանում կանանց ձեռնարկատիրության զարգացման ռազմավարությունը:

Թաքնված խտրականություն

Հայաստանի աշխատաշուկայում և զբաղվածության ոլորտում կանանց նկատմամբ գոյություն ունեցող ուղղահայաց (կարիերայի աստիճանների ոչ հավասար մատչելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և սեկտորների) խտրականության հետևանքով կանանց միջին ամսական եկամուտը կազմում է տղամարդկանց եկամտի 60.8%-ը, իսկ միջին ամսական աշխատավարձը՝ տղամարդկանց աշխատավարձի 65.6%-ը:



# Նիսեր և բարաքականություն



2014 թ. «Ա» թիվը

www.WomenNet.am



## Գործիս կանանց հաջողության գաղտնիք

Արդեն հինգերորդ տարին է՝ Գործիս կանանց զարգացման ռեսուրս կենտրոնը հիմնադրամի կողմից ստեղծված ձեռքի աշխատանքների ակումբի շնորհիվ տարածաշրջանի բազմազավակ, գործազուրկ, սոցիալապես անասպառկ կանայք գումար վաստակելու հնարավորություն ունեն: Ակումբին անդամակցող կանայք գործված հուշանվերներ են պատրաստում՝ մոտ 60 անուն կենդանիների տեսքով: Goris Crochet ապրանքանիշով ձեռագործ այս հուշանվերները սպառվում են աշխարհի տարբեր երկրներում, առավել շատ՝ Նորվեգիայում:

Ս որ աշխատատեղերի ստեղծումը Գործիս կանանց ռեսուրս կենտրոնն իր կարևորագույն առաքելություններից մեկն է համարում: «Գրեթե ամեն օր կանայք ու աղջիկներ են դիմում մեզ՝ ցանկանալով իրենց ձեռքի աշխատանքով գումար վաստակել: Մենք աջակցում ենք, խորհրդատվություն տալիս, տրամադրում նյութեր, թելեր: Սկզբում կանայք մեր արհեստանոցում սովորում են աշխատել, հարմարվել պահանջներին և երբ արդեն կարողանում են բարձրորակ արտադրանք տալ, սկսում են պատվերներ կատարել», - ասում է ակումբի համակարգող Նուրե Աղաբեյանը: Նրա խոսքով՝ իրենց մոտ աշխատող կանայք ոչ միայն Գործիսից են, այլև գյուղական համայնքներից: Գյուղում բնակվող կնոջ համար լավ հնարավորություն է հավելյալ գումար աշխատելու, քանի որ գործում են հիմնականում տանը, կարողանում են համատեղել աշխատանքն ու ընտանիքը, ստանում են պատվերը և սահմանված ժամկետում ավարտելով այն հանձնում:

«Հինգ տարի առաջ ընդամենը 4-5 կանանցով էինք աշխատում, ընդ որում, նրանք սկզբում այնքան էլ վստահ չէին, որ փոքրիկ խաղալիքներ գործելով հնարավոր է եկամուտ ունենալ: Բայց այսօր կանանց մեծ հոսք ունենք, մարդիկ հավատում են, մեծ հույսեր կապում մեզ հետ, - ասում է Նուրե Աղաբեյանը՝ հավելելով, - մեր ակումբի դերը էական է նաև այն առումով, որ մեզ մոտ են գալիս հիմնականում սոցիալապես անասպառկ, կարիքի մեջ գտնվող կանայք, շատերը միայնակ մայրեր են, ու այն գումարը, որ աշխատում են այստեղ, շատ դեպքերում ընտանիքի միակ եկամուտն է»:

Ռեսուրս կենտրոնն ապահովում է կանանց լավ աշխատելու համար բոլոր անհրաժեշտ պայմանները: Ստեղծվել է թելերի շրջանառու ֆոնդ, որի շնորհիվ կանայք պատվերը ստանալուց հետո թելի խնդիր չեն ունենում, առավել ևս, որ դրանք հնարավոր է միայն մայրաքաղաքից ձեռք բերել: Ապրանքները տեղում հավաքվում են, ուղարկվում պատվիրատուին. կանայք գերծ են մնում տեխնիկական կամ կազմակերպչական խնդիրներից՝ դրանով իսկ ազատվելով ավելորդ լարվածությունից: Բոլոր հուշանվերները ստացել են որակի վկայական, արտադրանքը համապատասխանում է միջազգային չափանիշներին, ինչի շնորհիվ առանց որևէ խնդրի սպառվում են տարբեր երկրներում: Թեմայի շարունակությունը՝ էջ 3

## Պեկին+20. Կախայք և տնտեսությունը




Այս տարվա հունիսին մեկնարկած Պեկին+20 գործընթացների շրջանակում վերլուծվում և ներկայացվում են Պեկինի գործողությունների ծրագրի 12 ոլորտները: Սեպտեմբերին ՄԱԿ-Կանայք կառույցն առաջարկեց ուշադրությունը սևեռել հատկապես «Կանայք և տնտեսությունը» բնագավառի վրա:

Ինչ է առաջարկում Պեկինի գործողությունների ծրագիրը կանանց տնտեսական հզորացման ուղղությամբ.  
• Կանանց ինքնուրույնության և տնտեսական իրավունքների խթանում.  
• Ռեսուրսների, աշխատատեղերի, շուկաների և առևտրի կանանց համար հավասար հասանելիության ապահովման աջակցություն.  
• Բիզնեսի և մասնագիտական վերապատրաստման ոլորտում ծառայությունների մատուցում.  
• Կանանց և տղամարդկանց աշխատանքային և ընտանեկան պարտականությունների հավասարակշիռ բաշխման խթանում:

Պեկինի գործողությունների ծրագրով կանանց ձեռնբերելության զարգացումը դիտվում է որպես աղբյուրային և աշխատաշուկայում կանանց խտրականության դրսևորումների հաղթահարման միջոց:

## Բիզնեսը հավասարություն է



- 1 Աջակցել գենդերային հավասարության ապահովմանն ուղղված միջոցառումների ընկերության ղեկավարության մակարդակում:
- 2 Հարգել և սատարել մարդու իրավունքները աշխատանքի վայրում և բացառել գենդերային խտրականությունը:
- 3 Ապահովել բոլոր աշխատակիցների՝ տղամարդկանց և կանանց, առողջությունը, անվտանգությունը և բարեկեցությունը:
- 4 Օժանդակել կանանց կրթությանը, որակավորման բարձրացմանը և մասնագիտական աճին:
- 5 Կիրառել կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնմանը նպաստող մոտեցումներ բիզնեսի իրականացման ողջ շղթայում:
- 6 Աջակցել գենդերային հավասարությանը նախաձեռնությունների և շահերի պաշտպանության միջոցով տեղական համայնքների մակարդակում:
- 7 Անցկացնել արդյունքների գնահատում և իրազեկել հանրությանը գենդերային հավասարության ասպարեզում հաջողությունների մասին:

«Խնայող»-1 յՅ Ի Ի ա

Շահում են և կանայք, և տղամարդիկ, շահում է ողջ հասարակությունը

Այս տարի եԱԿԿ-ը նշում է 2004-ին ընդունված Գեներալային հավասարության խթանման գործողությունների ծրագրի 10-ամյակը: Դաշինքի փեմնայում կայացած առաջին ամփոփիչ համաժողովում քննարկվեց, թե իրականում ինչ հաջողություններ են գրանցել եԱԿԿ-ն ու մասնակից երկրները այս փաստաթղթի իրականացման գործում: Փաստաթղթի հիմնական գաղափարն այն է, որ զարգացման բոլոր գործընթացներում կանանց ու տղամարդկանց լիարժեք ու հավասար մասնակցությունն է այն բանալին, որ բերելու է խաղաղության, բարգավաճման ու կայունության: Ըստ այդմ, եԱԿԿ մասնակից 57 պետությունները մեծ կարևորություն են տալիս կանանց ու տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների հավասարությանը՝ գտնելով, որ այդ գործընթացն առանցքային դեր է խաղում ցանկացած երկրի բարգավաճման և տնտեսական անվտանգությունն ու կայուն զարգացումը ապահովելու հարցում:



Կանանց ձեռնարկության խոչընդոտները Հայաստանում

Հայաստանում ձեռնարկատիրության գրանցման, վարման և այլ գործընթացներում կանանց ու տղամարդկանց միջև օրենսդրական տարբերություններ չկան: Սակայն սակայն անցկացված հետազոտությունները վկայում են, որ բիզնեսը սկսելիս հայ կանայք պետք է հաղթահարեն մի շարք խոչընդոտներ՝ ցածր ինքնագնահատական, անորոշության զգացում, դիսկի դիմելու ցանկության և գործնական կապերի բացակայություն: Օբյեկտիվ պատճառներից են՝ ֆինանսական միջոցների և վարկ ստանալու համար սեփականության բացակայությունը, վարկերի բարձր տոկոսադրույթները, ոչ բարեհավատ գործարար միջավայրը, ոչ պաշտոնական կոռուպցիոն մոտեցումները: Ի տարբերություն տղամարդկանց՝ կանայք նաև տան և կենցաղային հոգսերը կրողն են և ի վիճակի չեն բիզնեսին առավել շատ ժամանակ հատկացնել, ինչը բացասաբար է ազդում գործարար կապերի ստեղծման և բիզնեսի կառավարման վրա: Բացի այդ, կանանց ձեռնարկատիրության զարգացմանը խոչընդոտում են հասարակության մեջ դեռևս առկա գեներալային կարծրատիպերը: Հասարակության համար ընդունելի է, որ կանայք վարում են փոքր բիզնես, սակայն մեծ բիզնես մուտք գործող կանանց մասին այն կարծիքն է տարածված, որ նրանք ունեն ազդեցիկ տղամարդու հենարան և պաշտպանություն: Ինչպես ցույց են տալիս հարցումները, ընտանիքում գործարար կանանց մեծ մասը ստանում է աջակցություն, հատկապես, երբ լրացուցիչ եկամուտ են բերում տնային տնտեսություններին:

Միջազգային գործարար զեկույց



«Գրանթ Թորնթոն Ինթերնեշնլ» այս տարվա Միջազգային գործարար զեկույցի համաձայն՝ բիզնեսում ղեկավար պաշտոնների 24%-ը գրանցված են կանանց, ինչը ամենաբարձր ցուցանիշն է 2010-ից հետո: Այդ հետազոտության գնահատականներով՝ Հայաստանում բիզնեսի ղեկավար պաշտոններում աշխատում է 35% կին, ինչն ակնհայտորեն բարձր է աշխարհում գրանցված միջին ցուցանիշից: Սակայն հարկ է նշել, որ հետազոտության մեթոդիկայում ներառվել են ոչ միայն իրական ղեկավար պաշտոններ՝ նախագահ/փոխնախագահ, գլխավոր տնօրեն (CEO)/կառավարիչ տնօրեն, գործադիր տնօրեն (COO), այլ նաև, օրինակ, ֆինանսական վերահսկիչ, որը հայկական իրականության մեջ չի հանդիսանում բիզնեսում որոշումների ընդունման մակարդակի վրա իրական ազդեցություն ունեցող պաշտոն: Այդ պաշտոնում կանանց մասնաբաժինը Հայաստանում 60% է, ինչն ամբողջ բարձրացում է բիզնեսում ղեկավար պաշտոններում կանանց ներկայացվածության ընդհանուր ցուցանիշը:

Օլիվեր Մակոյ.

«Լույսը թունելի վերջում երևում է»...



Այս փաստաթուղթը, բացի գաղափարախոսական մոտեցումներից, նաև քաղաքական պարտավորություններ է ներթափանցում բոլոր մասնակից պետություններին և նախ և առաջ հենց եԱԿԿ կառույցների համար՝ բոլոր գործողություններում առաջնորդվելու գեներալային զգայուն մոտեցումներով: Փաստաթղթում հատկապես շեշտադրվում է այն փաստը, որ գեներալային բաղադրիչը անվտանգության հիմնախնդիրների անբաժան մասն է: Գործողությունների ծրագիրը ենթադրում է նաև մասնակից պետությունների կողմից կոնկրետ ծրագրերի կամ միջոցառումների մշակումն ու իրականացումը, որոնք ուղղված են խտրականության բացառմանը օրենսդրության և քաղաքականության մեջ, ներառյալ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարում: Հայաստանի օրինակով ասեմ, որ մենք, ծրագրեր իրականացնելով ՀՀ ոստիկանության համակարգում, հաշվի ենք առնում կանանց ու տղամարդկանց ներգրավման գործընթացը այդ ծրագրերում, նաև վերլուծում ենք դրանց ազդեցությունը այդ տեսանկյունից: Բացի այդ, 2008-ից ի վեր եԱԿԿ-ն զգալի ռեսուրսներ է ներդրել կանանց տնտեսական հնարավորությունները ընդլայնելու ուղղությամբ: Խորքային վերլուծություններից հետո եԱԿԿ-ն որոշել էր աջակցել և մինչ օրս էլ աջակցում է Մյունխենում կանանց երեք ռեսուրս կենտրոնների ստեղծմանը, ինչպես նաև նրանց միջև համագործակցության ձևավորմանը՝ զգալի ներդրում ունենալով նաև մարդիկ տնտեսական վիճակի բարելավման հարցում: Ուրախալի է տեսնել, որ կարճ ժամանակահատվածում, հատկապես վերջին երկու տարիներին այդ կենտրոնները նկատելի արդյունքներ են հասել կանանց ակտիվ ներգրավմանը:

Մեր զուգակցին է եԱԿԿ երևանյան գրասենյակի գեներալային հարցերով համադասող Օլիվեր Մակոյը, իսկ թեման զարգացման գործընթացներում կանանց ու տղամարդկանց հավասար մասնակցության աջակցող ծրագրերն են, որոնք Հայաստանում իրականացնում է գրասենյակը: Մեր առաջին հարցը Գեներալային հավասարության խթանման գործողությունների ծրագրի մասին է, ի՞նչ է այն ենթադրում և ինչպե՞ս է իրականացվում Հայաստանում:

րավման և տնտեսական հաջողությունների առումով: Իսկ քանի որ բարեկեցությունն ու տնտեսական կայունությունը սերտորեն կապված են քաղաքացիական ակտիվության հետ, հաճելի է փաստել, որ աճել է նաև այդ կանանց քաղաքական ակտիվությունը: Տեղական ընտրություններից հետո մարզի մի շարք համայնքների ավագանիները համալրվեցին այդ կենտրոնների աջակցությունը ստացած կանանցով:

Արդյոք իրականացվող ծրագրերը փոփոխություններ են բերում գեներալային հավասարության առումով: Իրականում Հայաստանում այդ ուղղությամբ ունի բազմաթիվ ազա-մավարկումներ և ծրագրեր, որոնց պետք է որ բարելավվեն վիճակը, բայց այդ ամենը շարունակում է թրթի վրա մնալ...

Իրավացի եք՝ ունեք բազմաթիվ փաստաթղթեր, ծրագրեր, պարտավորություններ են մշակվել տարբեր ոլորտներում կանանց մասնակցությունը ընդլայնելու և հզորացնելու ուղղությամբ: Սակայն երբ ուսումնասիրում ենք վիճակագրական տվյալները տարբեր ոլորտներում, ապա հստակ տեսնում ենք կանանց և տղամարդկանց անհավասարության դրսևորումները և քաղաքականության, և տնտեսության մեջ: Ակնհայտ է, որ կանանց ներկայացվածության մակարդակը Ազգային ժողովում շատ ավելի քերի է, քան նախատեսվում էր Ընտրական օրենսգրքով ամրագրված 20-տոկոսանոց քվոտայով, նույնը վերաբերում է քաղաքական այլ ոլորտների: Դրա հետ մեկտեղ, որոշակի փոփոխություններ, հատկապես ստորին օղակներում նկատելի են: Երբ ուսումնասիրում ենք իրավիճակը ՏԻՄ-երում, ապա տեսնում ենք, որ լույսը թունելի վերջում այնուամենայնիվ երևում է: Կայսր Մյունխենում կանանց մասնակցությունը ավագանիների կազմում բավականին բարձր է, մինչդեռ մի քանի տարի առաջ այստեղ կանանց ներկայացվածության մասնագծոր ցուցանիշն էր արձանագրվել: Ինձ համար դա ցուցանիշ է, որ մակախ այն բոլոր հիմնախնդիրներից, որոնք առկա են ընտրական գործընթացներում, դրական փոփոխությունները հնարավոր են, և կան մարդիկ, որոնք պայքարում և առաջ են տանում իրենց գաղափարները՝ փորձելով դրսևորել իրենց լիդերական հատկանիշները:

Որո՞նք են առաջիկա ամելիքներն ու ծրագրերը Հայաստանում կանանց առաջխաղացմանը աջակցելու ուղղությամբ:

Ճ»i 3 1/2ai áóÃlãõY

«Գյուղի յուրաքանչյուր կին դոստեցիալ ձեռներեց է»

Այն կարծրատիպերը, թե կանայք թույլ են, նրանց տեղը խոհանոցում է, և կնոջ դերն ընդամենը երեխաներ դաստիարակելն է, աստիճանաբար պատմության գիրկն են անցնում: Կանայք բիզնեսում կարող են ավելի հաջողակ լինել, քանի որ ավելի շրջապայան են, խոհեմ և ավելի պատասխանատվությամբ են վերաբերվում իրենց գործին, փաստում է Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանը՝ հիմնվելով իրենց կատարած ուսումնասիրության արդյունքների վրա: Մեր զրույցը նրա հետ գյուղաբնակ կին ձեռներեցների մասին է:

Գյուղի կանայք սովորաբար զբաղված են ոչ միայն զուտ տնային գործերով՝ ճաշ եփել, տուն մաքրել, երեխա պահել, այլև շատ ավելի ծանր գործեր են վերցնում իրենց ուսերին՝ ամսատու պահելուց մինչև պահածո և չիր պատրաստել, և սա արդեն հիմք է, որ մեծ կանայք այդ ոլորտներում, հենվելով իրենց փորձի վրա, փոքրիկ արտադրություն ստեղծեն: Նրանք ի սկզբանե օժտված են գործնական գիտելիքներով, և այս իմաստով գյուղի գրեթե յուրաքանչյուր կին պոտենցիալ ձեռներեց է, մնում է միայն մի փոքր աջակցություն ցուցաբերել պետական մակարդակով, - նշում է մեր զրուցակիցը:

Ընդհանուր առմամբ, օրենսդրական առումով որևէ սահմանափակում չկա գյուղի և մայրաքաղաքի կանանց միջև բիզնես հիմնելու համար, սակայն անգամ փոքրիկ վարսավիրանոց աշխատեցնելու համար գյուղի կանայք ավելի շատ խոչընդոտների են հանդիպում: Ըստ միության այս տարի իրականացրած ուսումնասիրության՝ կին ձեռներեցները, որոնք ոչ թե տնային պայմաններում են ինչ-որ աշխատանք կատարում, այլ օրինական ընկերություն են հիմնել, նշել են, որ իրենց համար առաջնային խնդիրը փոքր շուկան է և մարդկանց վճարունակության ջանք մակարդակը:

հարույց պատմություններ ստեղծել կամ չարաշահել ստուգումների իրենց իրավունքը, իսկ մարդու դա լինում է: Թեպետ Մակարյանը վստահեցրեց, որ իրենց հարցման արդյունքում պարզել են, որ գյուղի կին գործարարները չեն գնում կոռուպցիոն ճանապարհով ու գործարքի մեջ չեն մտնում հարկայինի հետ, նրանք շատ լավ պաշտպանում են իրենց իրավունքները:

Մյուս խնդիրն այն է, որ մարդու ավելի դժվար է վարկ վերցնել, սովորաբար անշարժ գույքի սեփականությունը գրանցված է ոչ թե կնոջ, այլ ամուսնու, հոր կամ եղբոր անունով: Բացի այս, ըստ Մակարյանի, էլի մտածելակերպից ելնելով, գյուղերում շատ տղամարդիկ չեն հաշտվում, որ կինը բիզնեսով է զբաղվում, հատկապես եթե այդ լուրջ գործ է:

Դրա հետ մեկտեղ, եթե տղամարդիկ միգրացիայի պատճառով ստիպված են լքել իրենց ընտանիքները և ժամանակավորապես հեռանալ, ապա կանայք այդ ընտանիքի կեցության, իրենց հասարակական դիրքի ամրապնդման համար կարիք ունեն գործարարությամբ զբաղվելու:

Մակարյանը մի ուշագրավ հանգամանք էլ ներկայացրեց, թե կին ձեռներեցներին ինչն է օգնում իրենց բիզնեսի հաջողության համար, դա կանանց բնագրան է, և շատ հաճախ, ըստ հարցումների, կանայք ավելի լավ են զգացել, թե գործն ինչպես կազմակերպեն, որ հաջողության հասնեն. մեկ-երկու լավ արդյունքից հետո նույնիսկ տան վճարողի են սկսել բիզնեսն ամբողջությամբ սկսելով կնոջը:



